

աշխարհագրութեան ուսուցիչն է նա՝ այդ գաղափարի ամենալայն առումը։ Բայց Հ. Ալիշան մի և նոյն ժամանակ այն հաղուադիւտ մարդկանցից է՝ մանաւանդ թէ հայ մարդկանցից, որոնք այն են եղել, ինչ որ ուսուցել են, որոնց հոգին խօսել ու թելադրել է այն ազնիւ մտքերն ու վառ զգացումները, ինչ որ գրի է առել գրիչը։ Իբրեւ քրիստոնեայ, իբրեւ մարդ բարոյական տեսակէտից՝ նա անգուցական արժանեաց տէր մէկ անձ է եղել. այդ են վկայում բոլոր նորան ի մօտոյ ճանաչողները։ Տողերիս գրողին ևս, բազմաթիւ ուրիշ այցելունների շարքում՝ վիճակուած է եղել տեսնել նորան առաջին անգամ անձանաշէլի համեատ արտաքինով, և ապա երկար խօսակցութիւնից յետոյ միայն իմանալ, որ գիմացի կորացած խղճով ծերունին Հայոց նահապետն էր՝ միշտ երիտասարդ, միշտ աշխոյժ, — իւր աննկուն եռանդովն ու վերապայց ոգւով։ Նորա անշուք արտաքինի անկենդան մնացորդները գերեզմանում են այժմ, — ներքին կեանքի փառաւոր ու տեական արդիւնքը պէտք է մնայ միշտ կենդանի մեզ մօտ. իսկ յաւիտենականի համար մեզ մնում է մաղթել հանգիստ անմահութեան կայաններում։

Սակայն մենք իրաւունք ենք համարում այստեղ մի անձնական դիտողութիւն ևս աւելացնել. Վենետիկում մենք այն տալաւորութիւնն ենք ստացել, որ Հ. Ալիշան մեծ ջերմեռանդութեամբ աշխատում էր լրիւ ու անաղարտ սրահել ամէն կերպ հայկականը իւր եկեղեցու ծէսերի, իւր միաբանութեան հոգեւոր կեանքի մէջ. ըստ երեւութին նա պարագլուխ էր միաբանութեան այն մասի, որ (ինչպէս մեզ թուեց) մաքառում է Հայ կաթողիկ համայնքի, և ի մասնաւորի Մխիթարեան միաբանութեան՝ լատինացման դէմ։ Որչափ ուղիղ է այս դիտողութիւնը, չենք կարող երաշխաւորել. կարծում ենք միայն, որ մօտիկ ազդեցւում երեւան պէտք է դան այդպիսի երկու մրցող կուսակցութիւններ Մխիթարեան միաբանութեան մէջ։ Յամենայն գէտս, ինչ որ Հ. Ալիշանին է վերաբերում, յիշեալ դիտողութիւնը մեզ այն համոզման է բերել, որ նա, իբրեւ

քրիստոնեայ և եկեղեցական՝ աւելի Հայ, եկեղեցու ժառանգութիւնից էր շունչ առնում, քան բուն աթմեան կաթողիկ եկեղեցուց, և այն մարդով միայն ջերմեռանդ կաթողիկ է եղել, որ հայ-քրիստոնէութիւնը կարողացել է հաշտեցնել իւր հօգու մէջ մի քանի կաթողիկական տեսութիւնների հետ։

Կ. Վ.

ՆԿԱՏՈՂՈՒԹԻՒՆՆԵՐ

ԱԳԱԹԱՆԳԵՂՈՍԻ և ՓԱԽՏՈՍԻ ՄԱՍԻՆ

Ա. Ագաթանգեղոս.

Գ. դարու Հայոց պատմութիւնը ուսումնասիրելու համար մենք ունինք անմիջական և միջնորդական աղբիւրներ։ «Անմիջական աղբիւր» ասելով ես ի նկատի ունիմ այն գրուածքները, որոնց հեղինակները կամ իբր ախանաւես են պատմում և կամ իրենց հաղորդած տեղեկութիւնները ուղիղ ախանաւեսներից են ստացել, լինին նորա Հայ թէ օտարազգիք (Յոյն, Ասորի և այլն), «Միջնորդական» անուանում եմ ընդհանրաւին այն աղբիւրները, որոնց պարունակած տեղեկութիւնները կամ անմիջական աղբիւրների վրայ են հիմնած և կամ բերանացի ու գրաւոր աւանդութիւնից հետո ամօք։

Այս շրջանի պատմութեան համար մեր ունեցած անմիջական աղբիւրների շարքում առաջնակարգ տեղ են գրաւում Փառատոսի և Ագաթանգեղոսի պատմական երկերը։ Առանձին կարեւոր նշանակութիւն կունենար, դո՛ւնէ եկեղեցական պատմութեան համար, Ջենոր Գլակի «պատմութիւն Տարօնոյ» գործը, եթէ նա վաւերական լինէր։ Պրոֆ. Գր. Խալաթեան Հ. Գաթընձեանի հետ միասին անստորակոսելի են կացուցել նրա ամենականութիւնը և գարու «Կարկաստան» լինելը։¹

1. 1877-ից սկսած, երբ Ալֆրէդ ֆոն Գուտշիլտի «Agathangelos» վերնադրեր կրող յօդուածը գերմանացի արևելագէտների օրգանում երեւայ՝² այլ ևս մեր պատմագրին ընծայուած երկը միայն

1) Տես. Ջենոր Գլակ. Վիեննա, 1893. արտատպ. «Հանդէս Ամսթերդամի».

2) Zeitschrift d. deutschen morgenländischen Gesellschaft XXXI S. 1—60. արտատպած 1877. Լայպցիգ. Ֆրանց Ռեւլ հրատարակեց նոյնը Գուտշիլտի Ման երկապիտակեց շաբաւում, Լայպցիգ. 1893. S. 339—420. Յիշած գիտնական ամսագիրը եւս պէտք նշանակեմ միայն ZDMG, իսկ վերջին ժողովածուն Ks.—Kleine Schriften վերնադրեց։

մի հեղինակի մօրի ծնունդ չի համարուում և լուծուում է հետեւեալ մասերի.

1) Ս. Գրիգոր Լուսաւորչի կեանքը, Հայոց դարձն է Գրիգորի միջին և Խոսրով ու Տրդատ Թաղաւորների պատմութիւնը.

2) Վարդ ա. Գրիգորի և ա. Հովհաննէանց.

3) Յայանութիւն ա. Գրիգորի—նրա Տեսիլք և Վարդապետութիւնը 1:

Գուշմիտ բաժանում է Ս. Գր. Լուսաւորչի կեանքը՝ նորից 2 մասերի, և առաջին մասին, որը Խոսրով և Տրդատ արքաների պատմութիւնն է ամփոփում մինչև Հայոց դարձը, նա առում է. «Եթէ առասպելական խառնուածքից ազատ էլ չէ, դո՛ւն է ապէս պատմական է, և ամենից աւելի լաւ կերպով կարելի է բնորոշել այս պատմութեան պատմութիւն անուանենք»²: Իսկ Ս. հատուածի երկրորդ բաժանմանը մասին, որը Հայոց դարձի և նրան զուգակից գէղերի պատմութիւնն է պարունակում, Գուշմիտ պնդում է, որ «բառի բուն իմաստով պատմական է և պէտք է իւր բացարձակ ազդեցով ազդելը ընդունուի»³: Սրա հակառակ հետեւեալ Բ. և Գ. հատուածները նրա կարծիքով պատմութեան համար ոչ մի կարեւորութիւն չունին և պատմական բնագաւառութեան նկատմամբ միայն անուղղակի անդամ նշանակութիւն ունին, որքան որ իրենց հեղինակման ժամանակի հայեացքներն ու ձրգաւորներն են արտացոլում»⁴:

Այս եղբակացութիւններն ընդունել են ներկայումս մեր զբաղանդութեամբ զբաղող բանասէրների մեծամասնութիւնը 4:

II. Ըստ Գուշմիտի ա. Գրիգոր Լուսաւորչի կեանքի հեղինակը Սահակ Մեծի շրջանին էր և իւր գործը գրեց Ե. դարու սկզբում, տառերի գիւտից անմիջապէս յետոյ: Այս պատճառով իւր դրոմիտ terminus ante quem non դնում է նա 402 թուականը: Բայց այս եղբակացութիւնը տարակուսելի է: Ամենից առաջ պէտք է նկատել, որ «տառերի գիւտից անմիջապէս յետոյ» (առնուա՞ցն ուրեմն 406.) և 402 թուականը հակասութիւն են: Բայց զբանից չափազանց անհաւանական է, որ քրիստոնէութեան Հայաստանում տարածող կենսապրութիւնը մի ամբողջ դար նրանից յետոյ պէտք է յորհուած լինէր, քանի

որ մեր հայրենիքում այնքան շատ յոյն և ասորի կրթուած հոգեւորականներ կային և հենց ա. Գրիգոր Լուսաւորչի ժամանակներից բաղմաթիւ դպրոցներ էին հիմնուած յունական և ասորի լեզուն ուսուցանելու համար: Փաստորէ Գ. 1 նմանապիսի դրուածքներից արած յիշատակութիւնը նոյնպէս մի կարեւոր հիմք է հակառակ Գուշմիտի: Գուշմիտին վերջիշեալ ժամանակագրական վճիռը ապու առիթ է տալիս «Ս. Գր. Լուսաւորչի կեանքը» մէջ Հինաց յիշատակուող: Նրա կարծիքով Հոնիքը միայն իրենց 395-ին Հայաստան արած արշաւներից յետոյ կարող էին Լուսաւորչի կեանքի հեղինակին ծանօթ լինել: Սակայն յոյն և ասորի սղերիները ոչ մի բառով չեն յիշում, որ Հոնիքը 395-ին առաջին անգամ են երևայել պատմութեան մէջ: Այսպէս Սոկրատ Սրբաւարիկոս առում է.

«Καὶ γὰρ ἦσαν (Ὀνόματι) καὶ ἐξείνη καὶ οὐδ' Ἀρμενίων τε καὶ τινὲς τῆς ἐκείνης κατὰ τρεῖς»¹: Աւելի մանրամասն տեղեկութիւն է տալիս ասորին. «Եւ ամեն տարեոջ եւն նշովեալ ազնւ Հինաց յաշխարհն Հասմայեցոց և արշաւեաց ի Ծոփս և ի Հայո և ի Միջագէտս և յԱսորիս և ի Կապադովկիս, և վարեցին յոյժ բազումս ի գերութիւն»²: Հոնիքի անունը արդէն 375-ից սկսած ծանօթ էր բոլոր արեւմտեան ազգերին, քանի որ նրանք այս թուականին արին իրենց առաջին մեծ արշաւաւոր գէպի Արեւմուտք 5, և անհնարին ևս չէ որ աւելի կանուխ հայերը նրանցից տեղեկութիւն ունենային, ինչպէս և պրոֆ. Է. Մայէքը՝ նորա ներկայութեամբ իմ կարգացած շարադրութիւնից յետոյ, այս կէտում ինձ իրաւունք տուեց 4:

Ամփոփելով մեր ուսածները՝ կատանաք, որ Գ. դարու պատմութեան համար իւր աղբւր Ագաթանգեղոսից ա. Գրիգոր Լուսաւորչի կեանքը միայն կարող ենք գործածել, որն ամենայն հա-

1) Յայն՝ ժամանակի աւերեցին Հոնք գՀաստան և դման ինչ արեւելից. տե՛ս Socr. Schl. eccl. hist. ed. Rob. Hussey. B. II. S. 656. հմմտ. B. III. Annotationes. S. 438. Դո՛ւ: Ὀνόματι:

2) Տե՛ս Anecdota Syriaca. Liber Khaliphorum. S. 8. 41. ...:

3) B. Niese, Grundriss der römisch. Geschichte, nebst Quellenkunde. München, 1897. S. 237.

4) Համ. Ագաթ. 26. 100. Գրիգոր Լուսաւորչի հայերէն, յունարէն և լատինարէն կենսագրութեանց մասին տե՛ս. Gelzer, Die Anfänge d. arm. Kirche 124—126, և J. Bidez, Académie royale belge. Bulletin de la classe des lettres et des sciences morales et politiques 1900. № 7. p. 608—614. և իմ յօդուածը արմ մասին անցեալ տարուայ Արարատում, էր. 480 շ. Ընդհանուր առմամբ կարելի է ասել որ այդ կենսագրութիւնները որքան ուշ ժամանակի ծնունդ են, այնքան ևս առասպելական են. հմտ. օրինակի համար Տաթևացոյ երկու քարոյները:

1) Ks. Agathangelos. 375. ZDMG 27.:

2) տե՛ս, վերև:

3) ZDMG. 60. Agath. 419—420.:

4) տե՛ս. օր. H. Gelzer, Die Anfänge der armenischen Kirche. Separatdruck aus den Berichten der Kug. Sächs. Gesells. d. Wissen. Sitzung von 4. V. 1895. s. 110—11. Այս հանդէսն ևս ապագայում կնշանակենք միայն KSGW տառերով:

ւանականութեամբ ներսիսեան շրջանի ար-
դիւնք է:

Բ. ՓԱՒՍՏՈՒ ԲԻԽՉԱՆԳԱՅԻ

I. Մեր երկրորդ անմիջական աղբիւրն է
Փաւստոս Բիւղանդացին, որին Ղաղար Փարպեցին
պատմագիր և Բիդանդացի է համարում 4: Ոչ մի ծան-
րակշիռ հիմք չունենք այս կոչումը տարբեր քան
աշխարհագրական իմաստով բացատրելու: Փաւս-
տոս ամենայն հաւանականութեամբ Բիւղանդի ու-
նումն է ծնուած և ուսած, բայց երկար ժամանակ
Հայաստանում մնալով կարողացել է տիրապետել
Հայ լեզուին լիովին: Թէ՛նա հայ է եղել կամ յոյն,
իւր մեզ հասած պատմական երկը քննադատելու
համար անպայման կարեւոր չէ: Վստահ կարելի է
տեսնել, որ նա հոգեւորական է եղել: Գեղեցիկ հա-
մարում է նրան Սահառունի, Փաւստոսի Գ, 2-ի
համաձայն 2: Բայց այս ենթադրութիւնը հիմ-
նուած է մի սխալ ընթերցումի վրայ, որ սրբա-
գրէլ խոստացել է Շնորհաւանի դպրի Պաղուստ,
թէ և ինչքան ինձ յայտնի է, դժբաղդաբար մինչ-
և օրս այդ խոստումը չի կատարուել 5: Եթէ
խոսկալէս Փաւստոս Սահառունի լինէր, անհա-
րին է որ նա Բաաին, Վարդադատի դայեակին,
նոյն ցեղի նահապետին՝ «բանսարկու» «անօրէն»
«սպանիւ» անուանէր 4 և այլ նմանապիսի տիտ-
ղոսներով զարգարէր, քանի որ ցեղամոլական
զգացումը այնքան յատուկ էր իւր ժամանակա-
կիցներին, և բացի դրանից այնպիսի սառնասրբ-
աութեամբ, մինչև անգամ հոգեկան հրճուանքով
պատմէր իւր սեփական ցեղի անխնայ և սարսա-
փելի կոտորածը, ոչնչացումը 5: Գ. դարու
պատմութեան համար Փաւստոսի երկը շատ աւելի
կարեւոր է քան Աղաթանգեղոսները, — Գրիգ-
Լուսաւորչի կեանքը, այնպէս որ մեր տեղեկու-
թեանց մեծագոյն մասն անշուշտ մենք նրան
ենք պարտական: Գուշտմիտ նրա մասին ա-
սում է, որ նա «խոսկական մի պատմաբան է»,
և որ 4-դ դարում յունարէն լեզուով գրած Հայոց
պատմութիւնը հայերէն թարգմանութեամբ մեզ
է հասել: Այդ ժամանակի պատմութեան համար
նա ամենակարեւոր աղբիւրներից մէկն է, թէպէտ
իւր չափազանցութեանց, և, հակառակ արքայա-
կան կուսակցութեան հոգեւորական շահերը մոլե-
ռանդութեամբ պաշտպանելուն համար զգու-

շութեամբ պէտք է գործածուի 1: Նոյն կարծիքը
ունի Փաւստոսի մասին նաև Գեղեցիկ. «Չորրորդ
դարու պատմութեան համար, ասում է նա,
Տրդատի մահուանից մինչև պետութեան բա-
ժանումը, Փաւստոսի երկը մի առաջնակարգ
պատմական աղբիւր է 2»:

III. Հակառակ այդ գիտնականների կարծեաց
Հայոց պատմագրութիւնը Փաւստոսին երբեք մեծ
կարեւորութիւն չի տրեցել տալ, և Ե. դարուց
սկսած համարուել է նա ընդմիջարկեալ և շատ
մասերով անվստահական 5: Իմ կարծիքով սխա-
լում են Գուշտմիտ 4 և Գեղեցիկ 5 պնդելով, որ
մեր պատմագիրների (ի հարկէ խօսքը Ե. դարու
պատմաբանների մասին է, քանի որ ապագային
ներք առանց պղնձալուծեան նրանց հետևում են)
այս աննպատակ հայեացքը, միմիայն Փաւստոսի ոչ
կոսմոքսական լեզուի արդիւնքն է: Եթէ համեմա-
տենք ընդհակառակը Փաւստոսի և Աղաթանգե-
ղոսի պատմածները Հայոց կաթողիկոսների աթա-
ռատեղում, Հովհաննիսեանց, Գայիաննեանց, Շողա-
կաթի վանքերի կառուցման մասին, և եթէ ի
նկատի ունենանք որ Փաւստոս ա. էջմիածնի հիմ-
նադրութեան ա. Գրիգոր Լուսաւորչի անսկզուն
մասին, եւայն, ոչինչ չգիտէ: և որ նա մարդկային
ախտերը այնպիսի պարզութեամբ և ազատու-
թեամբ է նկարագրում, որ անշուշտ Ռոկեդարում
տիրող զրաւիան ճաշողին և վանական ձգտումնե-
րին տրամադօքն հակառակ էր, այն ժամանակ
հասկանալի կլինի մեզ Ղաղարի դատապարտու-
թիւնը, թէ Փաւստոսի դրբում «այնպիսի ինչ . .
լոռաց անհաճօք բանք» կային: Ար այստեղ խօսքը
Փաւստոսի լեզուի մասին չէ, անուրանալի է, և
եթէ լեզուի մասին լինէր, ինչպէս կարող էր
Ղաղար «Յայնպիսումն քաղաքի» և ի մէջ այն-
չափ բաղմութեանն ուսելոյ վարժեալ այն» բա-
ռեղով գովել Փաւստոսին, որ ամբողջ գրքի հեղի-
նակն էր, և ընդմիջարկեալներին միայն դատա-
պարտել: Ղաղարը միայն Փաւստոսի երկի մէջ
ներմուծուած որոշ դէպքեր կամ պատմութիւններ
ի նկատի ունի, «այնպիսի ինչ անհաճօք լոռաց
բան կարգէր ի պատմութեան իւրում» ասելով 6: Նա
անհնարին է համարում, որ մի կրթուած մարդ իւր

1) Պատմութիւն Հայոց. էջ—12-14.
2) Die Anfänge d. arm. Kirche. 112-3.
3) տե՛ս. Հայոց սեպագիր արձանագրութիւն-
ների լեզուն. Վաղարշապատ, 1893. էջ. 15.
նկատ. 3.:
4) Ե. 35, 37
5) Ե. 35, 37:

1) Ueber die Glaubwürdigkeit d. arm. Geschichte.
M. von Khorene. KS. B. III. S. 283: Այդ յօդուածը
առաջ լոյս տեսաւ Verhandlungen d. Kng. Sächs.
Gesells. d. Wissens. Leipzig. philolog.—hist. Classe
XXVIII. 1876. S. 1—43.:
2) Die Anfänge d. arm. Kirche. S. 111.:
3) Ղաղար Փարպեցի. Վեկտորի. 1793. էջ
14:
4) Die Glaubwürdigkeit. KS. 283. VSGW. 52.
5) Die Anfänge d. arm. Kirche. 116.
6) Ղաղար Փարպեցի. էջ 14:

ժամանակում տիրող ճշմարտութեան այնքան հա-
կառակ պատմութիւններ յորինէր, այս պատճա-
ռով ենթադրում է, որ Սեյրի յանդուգն և անհա-
հանք բանիւ լրջաբար ձեռնարկեալ՝ յառ քեանց
զինգիս ըստ կամի, և կամ զի առաջ անկարեալ զի-
պրաւ՝ աշխարհեալ վնասեաց և անուամբ Փռտու-
սին զիւրոյ յանդգնութեանն սխալանս համա-
րեցաւ ծածկել, և այն յայտնի ցուցանի ամե-
նայն հայցողացս: Ազգարի կարծիքով այդ մի-
ջարիոյը յայն, և ամենայն հաւանականութեամբ
տարբէր պիտի լինի, և կամ նրանց հետեող մի հայ,
բնակիչ են տմանք յայնս, այլ մանաւանդ առաւել
յԱսորիս: Ար Ազգարի և իւր ժամանակակիցների
զգոյնութեան ազդեւրը Փաւստոսի պատմու-
թեան մէջ եղած որոշ դէպքերն են՝ երևում է
նաև Փարպեցու հետեալ խօսքերից. «Եւ-
փան զի կարգեցին առ ի նմանէ (ի Փաւստոսէ)
ի ձեզիս ուրիշ կարծեցին ոմանք բաժի ինչ ոչ յա-
մարժի զի զիպոգի...» (Ղ. Փարպ. էջ 12):

Այս բոլորից յետոյ պարզ է, որ Ազգարի
և իւր ժամանակակիցների կարծիքով Փաւստոսի
պատմութեան մէջ անհարազատ հատուածներ
կային: Աւելիք արդեօք մի յենարան որոշելու
այն ընդմիջարկումները, որ Ազգար յան-
դուգն մտադրանց դորձ է համարում: Բարեբաղ-
դարաց Փարպեցին համեմատելով Փաւստոսին
Աղաթանգեղոսի հետ՝ այգպիսի մի հիմք տալիս է
մեզ. «Ասան զի կարգեցին ի նմանէ ի տեղիս
ուրիշ, կարծեցին ոմանք բաժի ինչ ոչ յամարժի
և զիպոգի ուրիշ առաւելոյն ճշմարտիս Աղաթանգե-
ղոսի կոչեցելոց: Արեւմտ Աղաթանգեղոսը իւր
այրօրուայ մեղ հասած ձեռով այն միակ կրիտե-
րումն է, որով մենք միջարկութիւնների քա-
նակն ու որակը որոշել կարող ենք: Ինչ որ Փա-
ւստոսի մէջ Աղաթանգեղոսին հակառու է՝ այդ
ընդմիջարկոյն է, ըստ Ազգարի և ժամանակա-
կիցների: Առաջ քան այս որոշումը հետազո-
տելը՝ անհրաժեշտ է Փաւստոսի գրութեան ժա-
մանակը որոշել:

IV. Գաւառի բաւականանում է միայն
յայտնելով, որ յունարէն բնագիրը Գ. Գարու
վերջերումն է գրուած: 1 Գեղէր գնում է մի
բայ առաջ և պնդում՝ որ Փաւստոսի երկը 395
— 416 խմբադրուած պիտի լինէր, և ամենայն
հաւանականութեամբ տառերի զիւտից առաջ:
Իմ կարծիքով ընդհակառակը յունարէն բնագիրը²
անպայման 390-ից առաջ գրուած պիտի լինէր,
այս թէ ոչ, իւր կաթողիկոսութեան մարեանդ
պալատին, անհարկն է՝ որ նա աննշան կաթո-
ղաւորան, անհարկն է՝ որ նա աննշան կաթո-

ղիկոսներն և կաթողիկոսներն ամբողջ զլու-
նէր նուիրէր (2. 5—14.) և ս. Սահակին մի խօս-
քով անգամ չլիշէր: Բացի որանց մենք Փաւ-
ստոսի մէջ շաղկապանց կարեւոր մի յիշատա-
կութիւն ունենք, որը անկասկածելի է դարձնում
Փաւստոսի ս. Սահակի կաթողիկոսանալու մասին
զեռ ոչինչ չիմանալը, և նրա դործի 390-ից ա-
ռաջ աւարտուած: Այս հետաքրքրական վկայու-
թիւնը, որքան ինձ է յայտնի, դարմանալի կեր-
պով մինչև օրս բանասէրների աշակերթիւնից
զրկուել է: Յայտնի է որ հին մատենագրութեան
մէջ կան շատ դրուածներ, ուր աշ ժամանակի
հեղինակները իրենց մտքերն ու գգայութիւնը
անցեալ դարերի մեծ մարդկանց բերանն են դը-
նում, նրանց աւելի կարեւորութիւն տալու հա-
մար, կամ մատենելով որ նրանք ևս այս կամ
այն հանգամանքում նման ձեռով խօսած կլինէին:
Այս տեսակէտից խիստ հետաքրքրական է Փաւ-
ստոս. Գ. 5, ուր Աստուծոյ հրեշտակը Յուսի-
կին միւնիթարելով ասում է. «Յուսիկ, որդի Գրի-
գորի, մի՛ երկնչիր, զի լուաւ Տէր ազօթից բոց,
և ահա ծնցի ի քո դուստկացդ այլ զաւակ: Զի յի-
ցին նախ ի լուսաւորութիւն զիտութեան, և աղ-
բիւր հոգեւոր իմաստութեան...» և ի նոցանէ
բղիկեցին՝ և այլն, միշտ յորնակի: Ար այստեղ
գրաւորի սխալ չի կարող լինել, այդ երևում է
նրանց, որ Փաւստոս նոյն տեղեան մասին Գ.
3-ի վերջում խօսելով ասում է. «Վասն նորա
(նորսիս) իսկ ասացեալ էր ի տեղեանն Աստուծոյ
առ Յուսիկն՝ եթէ այդ լինելոց է ի սորա դաւակէ,
լիցի լոյս աշխարհի»²։ Այս ժառանգ անկաս-
կածելի է դարձնում, որ Փաւստոս Սահակի կա-
թողիկոսանալու մասին ոչինչ չգիտէր, ուրեմն
և 390-ից առաջ իւր դործը վերջացրել էր. և
որովհետեւ նա չեղում է Սամուէլ Մամիկոնեանի
մահը, այդ պատճառով ևս ենթադրում եմ, որ
նա իւր պատմական երկը 386—390 աւարտել էր:
Արանով լուծուած է նաև Փաւստոսի բնագրի
ինչ լեզուով գրուած լինելու հարցը:

Յիշեալ վկայութիւնը մի փայլուն ա-
պացոյց է տալիս նաև Փաւստոսի ընդմիջար-

1) Դերմ. Թարգմանիչ Լաուէր այս նրբու-
թիւնը ի նկատի չէ ունեցել. տե՛ս. M. Lauer, Des
Faustus v. Byzanz Geschichte Armeniens. Köln. 1879.
Թարգմանութեան ընդհ. արժէքի մասին տե՛ս
Gelzer, die Anfänge... s. 111. Anm. 1.—Menevischian
P. G. Faustus von Byzanz und Dr. Lauer's deutsche
Uebersetzung. WZKM. III. 1. s. 51—68, և Գ. Միւլլերի
նկատառութիւնները, նոյնտեղ 3. s. 201. Պրանտե-
րէն Թարգմանիչը նոյնքան անուշագիր է գրու-
նուել որքան գերմանացին. տե՛ս. Langlois, Col-
lect. I. p. 213:

2) Լաուէր և Լանգլուա ունեն տեղը ուղիղ՝
կրօնիկով են թարգմանած:

1) KS. Die Glaubwürdigkeit. s. 283. ZDMG.

2) ուրեմն 395—406. Die Anfänge. s. 116:

կուած լինելուն: Բայց արդենք այն մարտի էր արուած այդ, ինչ որ ընդունում է Ղազար: Եղած ընդմիջարկութիւնների որակն ու քանակը որոշելու համար զբաղուենք ամենից առաջ ընդմիջարկողի անձնութեամբ:

V. Երբ էր ապրում ընդմիջարկողը: Փաւստոս Գ. 5 չոյց է տալիս որ նա ու Սահակը դործունէութեան ծանօթ էր: Թէ նա Արշակունեաց անկումը և Գրիգոր Լուսաւորչի տնից քահանայութեան վերանայը գիտէր, այսինքն 440-ից յետոյ պիտի ապրած լինէր, երևում է նրա Գահիկի բերանը դրած խօսքերից. «Արդ վասն այսչափ ստութեանց ձերոց և պղծութեանց, քաճցի Տէր զբաշտութիւնի մեր ի մեզ: Խաճցի և զմահաւայրութիւն ի մեզ: Իւր ճառի մէջ նա տկնարկում է Վարդանանց պատերազմին: Դորանից պէտք է հետևեցնել, որ ընդմիջարկութիւնը չէր կարողնա և 450-ից առաջ տեղի ունենալ, և որովհետև նոյն ճառում երկրի անիշխանութեան մասին է խօսում, այս պատճառով ևս ենթադրում եմ իբր terminus post quem non 464: Այսին համաձայնում է նաև Վրթմանի, Յուսիան, Գահիկի և Ներսիսի քարտիկների ձգտումը, որոնց էական միտքն այն է՝ թէ քրիստոնէութիւն ուրացողները պէտք է պատժուին և ոչնչացուին: Իսկ իրենց հայրենիքի համար կռուողները և մեռնողները ի շարս մարտի ըստների և սրբերի պէտք է դատուին: Այսպիսի մտքերի արծարծումն ամենից աւելի յարմարում է Վարդանանց ժամանակին: Իմ կարծիքով ուրեմն Փաւստոս ընդմիջարկուել է 451—464: Անցնենք այժմ ընդմիջարկութիւններին:

VI. Վերջին տարին Փաւստոսի ամբողջութեան մասին զանազան կատակածներ են յայտնուել 2: Քննենք ամենից առաջ Փաւստոսի վերջին և առաջին զլուխները: Փաւստոս 2. 1—10 հեղինակի կողմից յաւելուած է, և կամ լինպէս ինքն է ստուծ իւր 2. զպրութեան վերնագրում՝ «Մեր նացուածք բանից ի ծայրէ», որովհետև այս գրքի լինելում ոչ մի բան չի հակասում իմ այս որոշման: Ընդ, բովանդակութիւնը և ժամանակագրութիւնը համաձայնում են առաջին դրութեանց հետ: Գ. 1—16 ընդհակառակն ընծայում եմ ևս մի ուրիշին, որովհետև այստեղ յիշուած անձնաւորութիւնները Փաւստոսին բուրդովն անձանօթ են: Բացի դրանից 11—14 յօդնուած է աչքի ընկնող մեանման շեմայով. գլ. 16-ը գլ. Գ-ի կրկնութիւնն է՝ այն

տարբերութեամբ միայն, որ այստեղ Ասպուրակէի մահն ևս յիշուած է. գլ. 16 ներկայացնում է մեզ վանականութեան բաւական զարգացած մի կաղամակերպութիւն, որի առաջնորդներն Գիւնտին, Վաչակին, Արայտին, Մարտին և Տրդատին Փաւստոս չի ճանաչում: Վերջապէս տարբերակ է ԺԱ—ԺԶ զլուխների շարունակ «Եւ էր» բառերով սկսուելը, որն անշուշտ ու Գրքի թարգմանիչներին և թարգմանութիւնն է յիշեցնում, մինչդեռ Բիւզանդացին տարբեր շարկաւորներ կամ մակերայններ է գործածում: Իմ ենթադրութեան համաձայն 2. զպրութեան ցանկի վերջը գտնուող վիճարանելի նախադասութիւնը ևս այսպէս եմ հասկանում. «Բոլոր պատմութիւններից յետոյ (առաջին երեք զպրութեանց), զուր, այս զիբը կարդացողներ, իմ տեղեկութեան համաձայն, կայ (զեռ) ուղիղ տան տուն»: Նախադասութիւնս գրողը ուզում է ասել, որ 2. 1—10 գեռ Փաւստոսիցն է, իսկ մեր նացածները 11—16 ուրիշներից:

VII. Թէպէտ Փաւստոս իւր գրքի վերջում յաւելուածներ է ընդունել, բայց սկիզբն ընդհակառակը կրճատուել է, և ամբողջ զպրութիւններ մեզ համար կորել են: Յայտնի է, որ մեր ձեռքին եղած Փաւստոսը սկսւում է Գ. զպրութեամբ: Այս երեւոյթը բացատրելու համար բուրդովն անբաւարար է այն արճնատական բացատրութիւնը՝ թէ Փաւստոս իւր նախորդ Լուսինա Եղեռացու և Ագաթանգեղոսի գրքեր իբր առաջին և երկրորդ դրութիւն է համարել: Եթէ Փաւստոսի երկը սկզբից ի վեր միայն Գ—2 զպրութիւններն ունեցած լինէր, կատարելապէս անհասկանալի կլինէր «Խոստարանութիւն նախադիտելի» զրքիս ընծայած բովանդակութիւնը: 1) Ժամանակագիր կանոնը մասեկից և 2) առնմից դրութիւնների. վերջին երկու բառով հեղինակն անշուշտ Փաւստոսի Գ—ն զպրութիւններն ի նկատի է ունեցել, քանի որ լինպէս տեսանք 2. միայն յաւելուած է:

«Այսինքն ևս չորք մատենան, և լուսին միոյ իրաց յիշատակարանը են»: Անհնարին է որ այս բացատրութիւնը իսկական հեղինակից լինի, քանի որ, լինպէս վերև տեսանք, նա իւր գիրքը երկու տարբեր մասերի էր բաժանել: Այս մեկնութիւնը յարմարում է Փաւստոսի այժմուայ վիճակին: առաջինն ընդհակառակը պատկերացնում էր երկին նախնական ձևը: Ապա յառաջարանի հեղինակը տալիս է մեր ձեռքին եղած Փաւստոսի բովանդակութիւնը: Թէ ինչ պարունակութիւն ունէր Փաւստոսի յունարէն բնագիրը, այդ յետոյ կտեսնենք. այստեղ միայն նկատենք, որ ընդմիջարկողն իրագործել է այն, ինչ որ խոստանում է իւր հետեւեալ խօսքերով. «Եւ

1) Գ. 14. այս միակ յիշատակութիւնն է Փաւստոսի մաս, ուր ու Գրիգ. Լուսաւորչի ցեղը ուղղակի Արշակունի է համարուում:

2) տիւն. Հանդէս-Ամօթեկայ 1900 № 4—10. 12. Գր. Ա. Պողոտեանի «Նկատողութիւնները»:

զորս խոտամուտն չորեք չորեքունց զպրտ-
թեանցս յերազանսիւր իւր զլուխս պա-
տուաստեցի մինչև ի կատարած սորին, առ ի
գոգուան ժառանգել...» Անշուշտ յառաջա-
բանի այս հակասութիւնը ներդաշնակելու համար
է կցուած Գ. Գպրութեան վերջին նախադասու-
թիւնը. «Նառարեցաւ երոտդ դառի, քսան և մի
պատմութեանց զպրտութիւնը, ժամանակացիս կա-
նոնի Փառսաւայ (ժախտեալ) Բիւզանդիայ ժա-
մանակադիր մեծի պատմագրի, որ էր ժամանա-
կազիր Յունաց»։ Ընդմիջարկողին է նաև 2. 1.
«Պոսիտոսայ յիւրմէ մեծութենէն յայնմ ժամանակն
և յայսայ» և 2. 5 «Մինչդեռ ևս կային նորա կեն-
դանիւր»։ Այս բոլորից յետոյ պարզ է, որ Փառ-
սոսի գործը թէպէտ ընդմիջարկուած է, բայց
նշ. Դադարի և իւր ժամանակակիցներէ մտքով:
Հետեւեալ զլուսմ ևս պէտք է ձգտեմ Փառսոսի
նախնական բնագրի ամբողջութիւնը պատկերա-
ցնել:

VIII. Դադարի ժամանակ Փառսոսի գործը
կրտուել է «Պատմութիւն Հայոց» և պարունակել
է «... մինչև ցեղապետութիւնն Արշակայ որ-
դայ Տիրանայ (?)», առ որով թագաւորութիւնն
բաժանեալ աշխարհս հայոց պատեհեալ յերկուս
ծուկնս ըստ օրինակի հնացեալ ձորձոյ. և աւարտեալ
աստածօր զրան պատմութեան իւրոյ մնացուցեալ հան-
գոց» (Դադար, 8): Արանից ևս պարզ երևում է, որ
Դադար Փառսոսի Գ. Գ. և. Գպրութիւններն է
իւր առաջ ունեցել, կամ իմէ 2. 5 ևս տե-
սել է, համարել է յաւելում, որ ինձ շատ հաւա-
նական է թուում: Արդէն Գեյջերն ևս նկատել է¹⁾,
որ Փառսոսի գործի յիշեալ վերնագրերը Պրոկո-
պիոսի նրան ընծայած պատմական երկի տիտ-
ղոսի հետ կատարելապէս համաձայնում է. «γὰρ τῶν
Ἀρμενίων ιστορία (26, 8) կամ γὰρ τῶν Ἀρμενίων συγγρα-
φή (30, 20)» — Հայոց պատմութիւն կամ համա-
գրութիւն: Մինչդեռ այժմուայ Փառսոսը կրում
է վերնագիրս «Բուզանդարան պատմութիւնը»,
որը յունարէնի վերածելով կաանայինը Βυζαν-
τιανή ιστορία բառերը, որ Դադարի և Պրոկոպիոսի
ուսանդած կոչման հետ ոչ մի կապ չունի:

Արդէն շատ յաճախ խօսուել է այն հարցի
մասին, թէ ինչու Փառսոս իւր գիրքը Գ.
զպրութեամբ է տպել: Եւ հրաժարում եմ այս-
տեղ այդ ամբողջ գրականութիւնը յառաջ բերե-
լուց, բայց ինձ թոյլ եմ տալիս նկատել, որ այս
նկատմամբ գործածուած բնութեան եղանակը
նպատակաւորմար է: Փառսոսին միայն իրենով
պէտք է բացատրել, և ոչ թէ իտրինացու օրե-
նակով, որովհետեւ վերջինս մի շարք աղբիւր-
ներ է յիշում, որոնք ստուգութեան կարօտ են:

Բայց մեր ձեռքն եղած Փառսոսի աղբիւրը իւր
լրածներն են միայն, որոնք համեմատական ու-
սումն ասիրութեամբ կարգուելն: Անցնենք այս
հարցի բնութեան մեր տեսակէտից:

Իւր իսկական յառաջաբանում Փառսոս
ասում է. «Եւ բարոգութենէն Թադէոսի Առարկայ
և նորուն յեկեց, և ի մարտիրոսութենէն մինչև
ի կատարումն վարդապետութեանն Գրիգորի
իւրոյ հանգստեանն (այս համարենք զուտ ե-
կեզ. պատմութեան մաս), և յառարկասարան
Սանատրիոյ արքայէն մինչև յաւիտեայ հնազանդելն
հաւատոցն² և՛ ի նորուն³ հանգստեանն Տրդատայ⁴
արքային² զանցեալ իրացն յառաջնոցն զվատան
լաւացն և որ զնոցուն հակառակ ընդդի-
մաւոյ, «այն ամենայն ի ձեռն այլոցն գրեցան»։¹ «Եւ
ձեռն այլոց» ասելով Փառսոս չէր կարող Դե-
բուքնա Նդեապոսն ի նկատի ունենալ, որովհե-
տե վերջինս այն ժամանակ ոչ թէ Սանատրու-
կից, այլ Արդարից խօսած պիտի լինէր: Նա չէր
կարող նաեւ Աղաթանգեղոսին անտրիւել, որով-
հետեւ մինչև 390, երբ նա իւր գործը գրեց, այժ-
մուայ Աղաթանգեղոսը դեռ ևս չէր խմբա-
գրուած, ինչպէս տեսանք: Այն «այլոց» գործերը,
որոնք՝ դուցէ՛ բացի ու Գրիգոր Լուսաւորչի կեան-
քից, կրել են, գործածել է Փառսոս իւր աղբիւր,
ինչպէս որ իւր յառաջաբանի շարունակութիւ-
նից երևում է. «Բայց և մեր ի միւսմ անտ եղաւ
միտք ի շատէ ի կարգի պատմութեան, ոչ զանց
արաբեալ թողաւ վատն պատշաճ իրաց կարգին»
(Գ. 1.): «Նառարեալութիւն նախագիտելի» ի
հեղինակը Փառսոսի այս ծրագրի մասին չի ու-
ղում ոչ մի տեղեկութիւն ունենալ. նա ընծա-
յում է ընդհանրապէս մեր պատմագրին բոլոր-
վին մի ուրիշ ծրագիր, ասելով, որ նա գրում է
«Ժամանակադիր արարեալ ի թագաւորութենէն
Խոսրովու որդւոյ Տրդատայ մինչև ի միւս վերջին
ժամանակն վաթիսարեայ թագաւորացն Հայոց,
և ի քահանայապետութենէ Վրթանայ որդւոյ
Գրիգորի... մինչև ցայնտիկ ի վերջինս՝ որը կա-
ցին զյիւստիս և Կիսկոպոսի Հայոց (այսինքն 2.
Գպրութիւնն ևս)»: Երկու յառաջաբաններն մէջ
եղած հակասութիւնը անկյայտնի է: Փառսոս
շարունակում է նոյն գլխում. «Վատն զի է ինչ
մեր պատմութիւն՝ որ առաջին է, և է ինչ՝ որ
վերջին է. իսկ որ միջին ինչ եղիւ, այն ի ձեռն
այլոց գրել գրեցաւ»։ Մենք արդէն տեսանք վե-

1) Թուեալով նշանակած բառերի դատաւո-
րութիւնը քերականորէն անհնար է բացատրել:
Եւ համարում եմ այս գրագրերի անուշագրու-
թիւն կամ նպատակաւոր աղաւաղման ար-
դիւնը և առաջարկում եմ գրած թուանշաններին
համաձայն կարգաւ:

1) Die Anfänge d. arm. K. 115.

բեռւմ, թէ «այլոց» բառն այսպէղ Փաւստոսի բերնում ինչ նշանակութիւն ունի: Այս հիման վրայ եւս պատմագրին «է ինչ մեր պատմութիւն, որ առաջին է» խօսքերով հասկանում եմ Հայոց նախնական պատմութիւնը, «իսկ որ միտն ինչ եղեւ» կարող է միայն Սանատրուկից մինչեւ Տրդատի ժամանակները պատմութիւնը լինել: Այս Միջին պատմութեան համար Փաւստոս ասում է. «Բայց զի մի՛ ի միջին մերոյ պատմութեանն ընդհատ եւրեւեղի հուն մի, նշանակեցաւ. զոր օրինակ աղիւս մի կարգած ի մէջ որմոյն շինուածոյ, ի կաշառումն թոգնեցախրեան»: Այս խօսքերից յետոյ անկասկածելի է, որ Փաւստոս «ի ձեռն այլոց» գրուած երկերն եւս համառօտ կերպով իւր պատմութեան մէջ հիշուել է, և այսպիսով նախնական ժամանակներից մինչեւ իւր օրերը Հայոց ամբողջական մի պատմութիւն է գրել, որն իսկապէս արժանի է եղել իւր բովանդակութեամբ Ղազարի եւ Պրոկոպիոսի նրան տուած վերնագրին՝ «Հայոց պատմութիւն»: Պարզ է ինձ համար նաեւ, որ Փաւստոսի կորած երկու Դպրութիւնները Հայոց «Առաջին եւ Միջին» պատմութիւններն են պարունակել: Փաւստոսին իւր այժմուայ ձեռք տուել է ընդմիջարկողը, որն գլխաւոր ձգտումն է եղել երկին բովանդակութիւնը կարելի եղածին չափ իւր ժամանակի աւանդութեանց յարմարացնել և այն բարձր, ինչ որ ըստ Ղազար Փարպեցու և ժամանակակիցների գեւ շատ անակոթժ և անյարմար էր՝ կարելի եղածին չափ սահմանափակել: Գործիս թարգմանիչը երկու առաջին Դպրութիւններն եւս կը ճատած և ազատ Հայերէնի վերածած պիտի լինի, ինչպէս յետոյ կտեսնենք: Անկարելի չէ, որ Ղազար Փաւստոսի ամբողջ գործը իւր առաջ ունեցած լինի. դո՛ւն այդպէս է երեւում իւր հեռեկալ խօսքերից. «Երկրորդ գրոց (Փաւստոսի Առաջինը Ազատեանդեղոս է) սկիզբն արարեալ պատմելոյ ի կարգի առաջին գրոյն...» (Ղազար եր. 7): Գծադղաբար նա Փաւստոսի բովանդակութիւնը միայն ընդհանուր խօսքերով է յիշում, մինչդեռ Ազատեանդեղոսին մանրամասն հաղորդում է. (էջ. 9—11): Եւ ենթադրում եմ, որ Փաւստոս Ղազարին շատ անհաճելի տեղեկութիւններ է պարունակել:

IX. Փաւստոսի երկու առաջին Դպրութիւնները բարեբաղդաբար բոլորովին անհետ չեն կորել: Ամբողջ մեր գրականութեան մէջ միակ երկն է Փաւստոսի գործը, որ «Դպրութիւն» վերնագրին է կրում «Գրքի» շիտորակէն: Միայն Սերէոսի յառաջաբանում գտնուող երկու գլուխները, որոնք նրա հետ մի կապակցութիւն չունին, կրում են նոյն վերնագիրը: Ժ. դարում այս երկու Դպրութիւնները Սերէոսի հետ չէին, ինչպէս որ Բառւմ

գարաններ այդ ցոյց է տուել: 1

Մենք տեսանք, որ Փաւստոսի երկը սկսում է Դ. դպրութեամբ. ակամայից հարց է առաջանում, թէ որդեօք այդ երկու գլուխները Փաւստոսի կորած երկու Դպրութիւնները չեն:

Փաւստոս Դ. 1-ի համաձայն Առաջին Դպրութիւնը Հայոց նախնական պատմութիւնը պէտք է ամփոփէր, և յիշուի Սերէոսի Ա. Դպրութիւնը պարունակում է Հայոց նախահայրերի պատմութիւնը, և այն եւս Փաւստոսի ժողովրդական և պատկերաւոր ձևով: Նա շատ բաներով է ապէս տարբերում է Մովսէս Խորենացուց. այսպէս օր. Բաղրատունիների ծագման խնդրում, որի նկատմամբ վերջինս կարեւոր է համարում իւր հովանաւոր Սահակ Բագրատունուն հետեւեալ խօսքերով զգուշացնել. «Բանդի ասելն ունեց անհաւաստի մարդոց, ըստ յօժարութեան, և մէջ ըստ ճշմարտութեան, ի Հայկաց զթագապիւր ազգի լինել Բագրատունեաց. վասն որոյ ասեմ՝ մի՛ այսպիսեաց յիմար բանից հաւանիւր. զի և մէջ մի շաւիղ կամ ցուցումն զոյ նմանութեան յասացեալս, որ զարդարութիւն ակնարկէ. զի ի բայ բանից և անո՞՞ իմն յազազս Հայկաց և նմանեացն կակաղի: Սրանից աւելի պարզ կերպով չէր կարող Մովսէս Խորենացին մեր Դպրութիւններին ակնարկել: Մանաւոր շատ քննորոշ է վերջին եղակի «կատակէն», որով Մովսէս Խորենացին անշուշտ այս Դպրութիւնը, հեռեւոր փաւստոսին, ի նկատի ունեցած պիտի լինի, որովհետեւ սա անակոթժ, անստույգ և «յիմար» բաներ է պատմում, այն եւս «անո՞՞ իմն բանիւր»:

Թէպէտ Մովսէս Խորենացին չի ասում ով է այս «կակաղը», բայց իւր նրա դէմ յարուցած բազորը չափազանց նման է Ղազարի մեղադրանքներին, միայն աւելի խիստ խօսքերով արտայայտուած: Աւելի բան եւս չէինք կարող նրանից, այո՛ւ. դարու աւանդութեանց պատմական ձեւակերպութիւն տուող մեծ ստիւնարից (բառիս հին իմաստով), սպասել. բանի որ նա այս ձգտմամբ ողեւորուած գրադէանների մէջ ամենահետեւորդանն է: Իմ այս որոշման ճշտութեան մի նշան եմ համարում նաեւ այն հանգամանքը, որ Խորենացին Դ. 2—42 շատ դէպքեր այժմուայ Փաւստոսին է առնում՝ առանց մի անգամ գունդ նրա անունը յիշելու: Ա. Դպրութիւնը Փաւստոսի հետ շօշափման ուրիշ կէտեր եւս ունի: Առաջին Դպրութեան հեղինակը խոստանալով Հայոց նախահայրերի մասին առատութիւն պատմել, շարունակում է, թէ նա արդի ժամանակների ականք գէպքերի մասին պէտք է պատմէ և 5 վերջին թաղաւորների պատմութիւնը պիտի անէ. (Սերէոս. էջ. 1): Յիշա-

1) A. Baumgartner. ZDWG. XL. 466.

ի Փաւստոս պատմում է իւր Գալուսթիւն Փ—
ի 5 թաղաւորներ, Խոթրալի, Տերանի, Արշակի,
Պապի և Վարդգիսի պատմութիւնը: Բայց վե-
րջիշեւիներից իմ Փաւստոսին բնծագած այս
գործերը ունին շոշափոսն ընդհանուր կէտեր:
Այսպէս օրինակի համար Մամիկոնեանց ծագման
(Փաւստ. Ե. 37, էջ 203 և Սերէոս էջ 12—
13) և Յարպէղիների նկատմամբ (Փաւստ. Ե.
36. Սերէոս, էջ 5): Կթէ ի նկատի ունենանք
երկուսի պատմելու ժողովրդական ձևը, և թէ
ինչպէս նորանք նոյն բառերն են գործածում
նոր գրութիւններ սկսելիս, նաև այն՝ որ Անանուսը
իւր ժամանակագրական տախտակը մինչև Պապ
է շարունակում (Սերէոս, էջ 10), այն ժա-
մանակ պարզ կլինի մեզ համար, որ այս երկու
Գալուսթիւնները Փաւստոսին են պատկանում:

Իմ այս եղբայրացութիւնները գրեթէ անհեր-
քելի են դառնում դեռ հետեւեալ դրեղ փաս-
տով: Պրոհպիոս յոյն պատմիչը գործածում է Փաւ-
ստոսն իւր աղբիւր և նրանից առնում է այնպիսի
գէտերը, որոնց հետքն անգամ չկայ պատրուպ
մեր ձեռքին եղած Գալուսթիւններում (Փ.—2.):
Այսպէս օրինակի համար Պրոհպիոս գրում
է (de Aedificiis III. 1). „Καὶ τότε τὰς τῶν ἐν Παρθίᾳ
Βασιλέων τὸν ἀδελφὸν τὸν αὐτοῦ Ἀρμενίῳ Βασιλεῖ
κατεστράτα Ἀρσάχην ὀνομα, ὥσπερ ἢ τῶν Ἀρμενίων
ιστορία φησὶ“. «Յայնժամ կարգեացումն յարալիցն
Պարթևաց զեղբայր իւր Արշականուն թագաւոր
Հայոց, որպէս պատմէ պատմութիւնն Հայոց»: Պրոհ-
պիոս, ինչպէս առնանք, ի տῶν Ἀρμενίων ιστορία
տակելով միայն Փաւստոսի երկն ի նկատի ունի 2:
Ա. Գալուսթիւն՝ յոյն պատմագրի այս խոս-
քերին համապատասխանող մասը հետեւեալն
է. «Յայնժամ ժամանակի թագաւորեցոյց Արշակ
զորդի իւր զԱրշակ փոքր կոչեցեալ ի վերայ աշ-
խարհին Հայոց...: Ի նկատի ունենանք նաև, որ
Պրոհպիոս և Ա. Գալուսթիւն միասի երկերն են,
որոնք Պարթևաց Ա. թագաւորին Արշակ են ա-
նուանում, իսկ միւսները Վարդգիս: 3

Այսուհետև, կարծում ենք, ոչ մի կասկած
չի կարող լինել, որ Փաւստոս չերաւ իր ճառարած
է և մերձեւորութեան մասնաւոր երկու գալուսթեանց բե-
կորներն ունենք: Թէ ինչպէս է եղել, որ այս երկու
գալուսթիւնները Սերէոսի մօտ են մնացել, խնդրե-
լուծման համար մի կտրուկ ակնարկ տալիս է
Ստեփաննոս Տարսնեցին, չեղելով Փաւստոսին Ա-
ղեղարու բոլոր մատենագիրներից յետոյ, Սերէո-

սից անմիջապէս առաջ 1. շատ հաւանական է
որ Փաւստոս իւր աղետաւոր զգրութիւն-
ներով մինչև Փ.—ՅԱ. դար ձեռագիրներում
Սերէոսից առաջ դրուած լինի, և դրանից
յետոյ իր արդի ձեռով իւր առանձին պատմագիր
նկատուած լինի և իւր երկու գալուսթիւնները
ստեփան, որոնք ընդհանրապէս շատ ազատագում-
ներից և ըստ Խորենացու և Ասողկի պրո-
գրուելուց յետոյ համարուած լինին Սերէոսի ան-
բաժան մաս 2:

X. Յիշենք այստեղ համառօտակի գլխաւոր
աղաւթումներն ու կրճատումները: Սերէոս.
էջ 2. Հայիկ պատմութիւնն ըստ Խորենացու.
ըստ Բիւզանդի ընդհանրապէս էջ. 32: Էջ 6.
«Փանդի զոյն ճառէ ժամանակագիրն...» բառե-
րից յետոյ Մարտեանի պատմութիւնը չի յարմա-
րում և անջատուած է մնում, այն պատճառով
հաւանականաբար էջ 7 մի շարք պատմու-
թիւններ կրճատուած պիտի լինին: Ժամանակա-
գրական տախտակներն ևս չափազանց աղաւ-
ղուած են: Բ. գալուսթիւնից, որը մեզ Հայոց
միջին պատմութիւնը պիտի անէր՝ Սանատրուկից
մինչև Տրդատ, մնացել է միայն մի հա-
տուած Մամիկոնեանց նախահայր Մամիկի և Կո-
նակի մօտին (էջ. 11-13.): Արդէն այս երկու գալ-
ուսթիւնների միասին բռնած էջերի չնչին թիւը—
18, ամենալաւ ապացոյց է նրանց ստորագրելի ան-
գամահատութեան, բանի որ Փաւստոսի իսկու-
կան գալուսթեանց իւրաքանչիւրի ծաւալը միջին
թիւով մօտ 70 էջ է:

XI.— Այս երկու գալուսթիւնների մէջ Փաւ-
ստոս իւր աղբիւր գործածում է Ասորի Մար
Աբաս Մծբնացու գիրքը, 5 որը Գ. գալու-
սիկում պիտի ապրած լինի. այս գրքի մէջ նա
գտնում է մի արձանագրութիւն, որը գրել էր
Ագաթանգեղոս Տրդատի քարտուղարը որս հրա-
մանով է: Մովսէս Խորենացին ևս Ա. 9—Բ. 9,
օգտուում է Մար—Աբասից, բայց նրան կասկած
է անուանում, որն ըստ Փաւստոսի 6 Լեւոն է նշա-
նակում (KS. 317.): Խորենացին քաղում է նրանից

1) Պատմութիւն տեղեր. Բ. տպագր. Պե-
տեր. 1885. էջ. 7.

2) Հմմ. Ասողկի. ծանօթ. 8.

3) Մծբն պէտք է կարդալ և ոչ Մծուբնա,
ինչպէս A. Baumgartner-ը ցոյց է տուել. ZDMG
XV 495 Ann.I.

4) Ագաթանգեղոս անունն իմ կարծիքով
հարողի չէ, ինչպէս Փաւստոսն է կարծում, այլ
պատկանում է հենց այս պատմական անձնա-
ւորութեան, որի հեղինակաւոր անուամբ նաև
մեր Ագաթանգեղոսի տեղագրական խոնարհները
կրկնց գործը զարգարել են:

1) C. H. B. G. Dindorf. V. III. Bonnae, 1838.

2) Տմնա. VIII. տէս նաև Procop. De bello
persico. II. 3. 163:

3) Ինձ թուում է, որ Պրոհպիոս Հայերից
մի բան լսել և գործ աղգեցութեան տակ է գործի
բառը գեղեցիկ գործել:

Հայոց նախահայրերի պատմութիւնը 1: Յամենայն դէպս այս 2 Վարդաբանները նոյն անձնաւորութիւններն են, և ո՛չ ինչպէս Կարբէկէն է կարծում, Մովսէս և Վարդաբան միեւնոյնն են 2: Բայց մինչդեռ Փաւստոս իւր սովորական ձեով Վարդաբան պատմածները ժողովրդական աւանդութիւններով և ոճով է արտայայտում, Մովսէս Խորենացին պէնսում է և կոկում ըստ սոփեստական ճարտասանութեան պահանջներին 3: Փաւստոսի այլ աղբիւրների մասին անցողակի կիսուեմ փնտրականութեան պատմութեան մէջ:

XII. Փաւստոսի գլխաւոր պատկանութիւնը սխալ ժամանակագրութիւնն է 4: Այս մասին արդէն շատ է խօսուել, և ես բաւականանում եմ միայն երկու օրինակով: Յայտնի է, որ Գիտեղեականոսի և Ներոէհի մէջ 298-ին կապուած դաշնագրութիւնը 40 տարի տեւեց, թէև Հայոց և Պարսից մէջնայն միջոցին խլրտումներ պակաս չեն եղել 5: Ներոէհը մեռնում է 303-ին, բայց նա ըստ Փաւստոսի տիրում է դեռ Տերանի և Արշակի (326-338) (339-367) ժամանակ: Անշուշտ Փաւստոս իւր ստացած սխալ բերանացի տեղեկութիւնների վրայ հիմնուելով շփոթում է Ներոէհին Շապուհին կամ իւր զօրավարներից մէկին հետ: Մի ուրիշ կոպիտ ժամանակագրական սխալ տնում է նա Ներսէս Մեծի նկատմամբ (362-373), յիշելով, որ նա Վաղէսից (364-378) արքայութեամբ է և նրա մահից յետոյ է միայն իւր երկերը յետ դառնում, Արշակի թագաւորութեան օրով (+ 367): Այս սխալը եւ համարում եմ արդեն Փաւստոսի այն ձգտման, որով նա ճշնում է Ներոէսի կեանքը Ս. Բարսղի վարքին զուգահեռական դարձնել:

Իհարկէ Փաւստոս իւր ժողովրդական պատմադիր շատ ըան չափազանցում է, մասնաւոր թուերի և հրաշապատումների նկատմամբ:

Ինչպէս Փաւստոսի մեղ հոտած, նոյնպէս Սէբէոսի երկու պարութիւնների մէջ Կարբէկ եղածին չափ հեղինակը խուսափում է իշխողների անունները յիշելուց և բաւականանում է «թագաւորն

կամ արքայն Հայոց, Պարսից և Յունաց» արտգոյնելով: Այս ևս նրա ժողովրդական բնատուրութեան մի յատկանիշն է: Չնայած այս բոլոր պակասութիւններին, Փաւստոս մնում է ամեն նկատմամբ մեր Գ. դարու պատմութեան համար ամենարժեքի աղբիւր, և նրա թէ մեր և թէ այլ հարեան աղբիւրի նկատմամբ աւանդածները հաստատուում են ուրիշ աղբիւրի պատմագրութեան մեղ հաղորդած տեղեկութիւններով:

Յ. Թովմեան.



«ԱՐԱՐԱՏ» ԱՄՍԱԳՐԻ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Խոնարհաբար խնդրում եմ տեղ տալ «Արարատ»-ի համարներից մէկում իմ հետեւեալ երկտողին:

«Արարատի» տարւոյս յուլիս — օգոստոս համարում կարդացի «Հիւսիսի Արծիւը» զրբիս մասին քննադատութիւնը: Անյայտ քննադատը, իջմիածնում նստած, պէտք էր յուսալ որ այնքան ծանօթ պիտի լինէր Հայոց պատմութեան հետ, որ ինքը ծուղակի մէջ չընկնէր:

Յիշեալ քննադատը իմ ընդունակութիւնը չափում է մի պարբերութեամբ, որ առաջ է բերուած յիշեալ համարում: Դորա գէմ ես առաջ եմ բերում այն արձանագրութիւնը, որը, գոհութիւն Աստուծոյ, մինչև այժմ արձանագրուած է Վարդաբլրի գլխին զիս կանգուն մնացած բերդի ծակատին: Ահա այդ իւր ուղղադրութեամբ. «Ի ՆՂԹ (499) թվականին Հայոց եւ Կորիկի թագաւոր շինեցի զհրաւրնս վասն մեղաց թողութեան և արեւելաւորութեան իմոյ ընդ ձեռամբ Աշոտ Մարտպանին: Աւելին չեմ ասում, թող ընթերցողը դատէ: Քննադատը այնքան հասկացողութիւն պիտի ունենար, որ 499 թուականը ընդունէր Հայոց թուական և չընկնէր մոլորութեան մէջ: Եթէ այդ արձանագրութեան էլ չէ հաւատում, ես կարող եմ աւելին ասել:

Բագրատ Արիագեանց.

19 Հոկտեմբերի 1901 ամի
Թիֆլիս.

1) vgl. Ueber die Glaubwürdigkeit. KS. s. 317—325. VKSGW. 31-39.:

2) Généalogie d. Patr. arm. տե՛ս Գուշաճիանի վերոյիշեալ յօդուածը. Н. Марръ, О начальной истории Арменіи, Анонимна. Византийскій Временникъ, 1894. II. см. 298. Vetter, Das Buch des Mar Abbas von Nisibis և այլն:

3) տե՛ս. Das Buch der Chrie. von A. Baumgarten. ZDMG. XI. 457ff. Կարբէկի քննական երկերը Խորենացու մասին, Խաղաթեանը և այլն:

4) Gelzer, Die Anfänge, s. 116—123. Ս. Մալխասեան, Առումնասիր. Փաւստ. պատմութեան մասին. Վիեննա. 1896. էջ. 43—54, և այլը:

5) Փաւստոս. Գ. 8, 11.: